




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«2» ապրիլի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ  Մ. Անանյան

ԳԲԽ-25/16 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Ավանգարդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 15.03.2016թ. ներկայացրած բողոքով «Ավանգարդ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ներկայացված բողոքի առարկան է հանդիսանում «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/11-ՔԿՎ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող

հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 5 որոշման մեջ Ընկերության հայտը Ընթացակարգի հրավերին չհամապատասխանող հայտերի ցուցակում ընդգրկելը այն հիմնավորմամբ, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ըստ հրավերի պահանջի համապատասխան փաստաթղթեր:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով հայտարարված ընթացակարգին և հայտ է ներկայացրել հրավերով սահմանված 10 չափաբաժինների մասով:

Ընկերությունը 10.02.2016թ. ստացել է ծանուցում այն մասին, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 14 և 17 չափաբաժինների համար ներկայացված գնայի առաջարկները նվազագույնն են և Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ինչի արդյունքում պետք է կնքվի պայմանագիր: «Ավանգարդ» ՍՊԸ-ից պահանջվել է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և ցածր գին ներկայացնելու վերաբերյալ հիմնավորում:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքում վկայակոչել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասը, 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 6-րդ մասը, ինչպես նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին ենթակետը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՔԿՎ(16)-1» ծածկագրով ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3 կետը և հայտնել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն ծանուցումը 10.02.2016թ. ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում հրավերով նշված էլեկտրոնային փոստին սահմանված ժամկետում՝ 12.02.2016թ. ուղարկել է պահանջվող փաստաթղթերը:

Այսուհետև, Ընկերությունը ստացել է ծանուցում այն մասին, որ թիվ 23 չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված ժամանակահատվածում չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը, ինչի արդյունքում վերջինիս հայտը մերժվել է և վերը նշված չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «Ավանգարդ» ՍՊԸ-ն, որի պարագայում հարկավոր է ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և ցածր գին ներկայացնելու վերաբերյալ հիմնավորում:

Ընկերությունը 18.06.2016թ. հրավերում նշված էլեկտրոնային փոստի հասցեին է ուղարկել նաև թիվ 23 չափաբաժնի համար գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն գտնում է, որ ընկերության հայտը մերժելու որևէ իրավական հիմք առկա չէ, քանի որ Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են հրավերով պահանջնող բոլոր փաստաթղթերը:

«Ավանգարդ» ՍՊԸ-ն խնդրել է որպես միջանկյալ ընթացակարգ կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՔԿՎ(16)-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 09.03.2016թ. թիվ 5 կետով կայացված որոշումը և դադարեցնել «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը՝ վերականգնելով Ընկերության ներկայացրած հայտը:

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 24.03.2016թ. թիվ 40/11-1042 գրությամբ «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. ներկայցրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ Ընկերության ներկայացրած բողոքն ակնհայտ անհիմն է, ոչ իրավաչափ և այն ենթակա է մերժման, քանի որ գնահատող հանձնաժողովը առաջնորդվել է բացառապես գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով և գործել է Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, իրեն վերապահված իրավասության սահմաններում գնահատել է Ընկերության կողմից ներկայացված՝ չհիմնավորված ցածր գնային առաջարկ ներկայացնելու վերաբերյալ հիմնավորումը, և այն իր իրավասության սահմաններում համարել է ոչ բավարար:

Թիվ 14-րդ, 17-րդ և 23-րդ չափաբաժիններով Ընկերության ներկայացրած գնային առաջարկի հիմնավորումը գնային հաշվարկ է, Կարգով սահմանված լրացուցիչ հիմնավորումներ չէ, որոնց ներկայացումը Կարգով, ինչպես նաև տվյալ ընթացակարգի հրավերի 7.5 կետի 3-րդ ենթակետով սահմանված պայման է և այն չունի նաև ապացուցողական հենք:

Պատվիրատուն հայտնել է, որ Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետի, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2016թ. թիվ 667-Ա հրամանի պահանջը իմպերատիվ է և առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագիրը ներկայացնելը մասնակցի պարտավորությունն է: Մասնակիցը՝ ներկայացնելով գնային առաջարկի հիմնավորում՝ ապրանքի ձեռքբերման գինը, միաժամանակ Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համապատասխան չի ներկայացրել առաջարկվող ապրանքի անվանումը, այլ որպես տեխնիկական բնութագիր և անվանում՝ նույնությամբ ներկայացրել է Պատվիրատուի գնման հրավերով ներկայացրած տեխնիկական բնութագիրը՝ չհստակեցնելով առաջարկվող ապրանքի կոնկրետ անվանումը:

3. ԳԲԽ-26/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-25/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-15/11-ՔԿՀ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 2-րդ, 3-րդ, 8-րդ, 9-րդ, 14-րդ, 17-րդ և 23-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. փետրվարի 9-ին ժամը 12:00-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.5.10 կետի համաձայն՝ Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժիններով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն:

- 1.5.12 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցում ուղարկել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ավանգարդ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակի

հավաստագրերը, ծագման երկրի հավաստագրերը, ինչպես նաև նմուշները: «Ավանգարդ» ՍՊԸ-ի առաջրկած գները Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժիններով ցածր են եղել 75%-ից, որի վերաբերյալ **Ընկերությունը պետք է ներկայացնի գրավոր, պարզառաքանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում ցածր գնի վերաբերյալ:**

3. Ընթացակարգի քարտուղար՝ Ն. Մկրտչյանը, oooavangard@list.ru էլետրոնային փոստին ուղղված ծանուցումամբ հայտնել է, որ Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժիններով որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն, որի հետ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ պետք է կնքվի պայմանագիր: Ծանուցմամբ Ընկերությունից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակի հավաստագրերը, ծագման երկրի հավաստագրերը, ինչպես նաև նմուշները: Ծանուցմամբ նշվել է նաև, որ Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժինների համար Ընկերության ներկայացված գնային առաջարկը ակնհայտ ցածր և չհիմնավորված է եղել, ուստի ծանուցմամբ խնդրել են ներկայացնել **գրավոր, պարզառաքանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում՝ ցածր գնի վերաբերյալ:**

4. Որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեսքով հաշվարկ.

օձառ ձեռքի

ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում	527.8 ՀՀ դրամ
տրանսպորտային ծախսեր	18,45 ՀՀ դրամ
շահույթ	7.9 ՀՀ դրամ
ԱԱՀ	28.75 ՀՀ դրամ
վաճառքի գին	690 ՀՀ դրամ

օձառ փնտրեսական

ձեռքբերման գին ԵՏՄ անդամ	313.07 ՀՀ դրամ
--------------------------	----------------

երկրում	
տրանսպորտային ծախսեր	11,6 ՀՀ դրամ
շահույթ	17 ՀՀ դրամ
ԱԱՀ	68.33 ՀՀ դրամ
վաճառքի գին	410 ՀՀ դրամ

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն պարտրաստ է ձեռքի օճառը մատակարարել 1 կգ 690 ՀՀ դրամ գնով, տնտեսական օճառը՝ 1 կգ 410 ՀՀ դրամ գնով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. փետրվարի 16-ին ժամը 12:00-ին կայացած նիստի արձանագրության՝

- 1.6 կետի համաձայն՝ Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված **«Ավանգարդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ինչպես անհրաժեշտ փաստաթղթերը**, այնպես էլ առաջարկվող ապրանքների նմուշները:

- 2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժինների մասով մերժել, քանի որ երեք աշխատանքային օրվա ընթացքում **չի ներկայացվել համապատասխան փաստաթղթեր**, ըստ հրավերի պահանջի:

- 2.3 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ՔԿՀ(16)-1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել հաջորդաբար տեղ զբաղեցրած «Ավանգարդ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 23-րդ չափաբաժնի մասով, քանի որ գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

- 2.7 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցում ուղարկել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից «Ավանգարդ» ՍՊԸ-ին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակի հավաստագրերը, ծագման երկրի հավաստագրերը, ինչպես նաև նմուշները: «Ավանգարդ»

ՍՊԸ-ի առաջրկած գները Ընթացակարգի 14-րդ և 17-րդ չափաբաժիններով ցածր են եղել 75%-ից, որի վերաբերյալ **Ընկերությունը պետք է ներկայացնի գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում ցածր գնի վերաբերյալ:**

6. Ընթացակարգի քարտուղար՝ Ն. Մկրտչյանը, oooavangard@list.ru էլետրոնային փոստին ուղղված ծանուցումամբ հայտնել է, որ Ընթացակարգի 23-րդ չափաբաժնի որպես հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ավանգարդ» ՍՊԸ-ն, որի հետ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ պետք է կնքվի պայմանագիր: Ծանուցմամբ Ընկերությունից պահանջվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը, որակի հավաստագրերը, ծագման երկրի հավաստագրերը, ինչպես նաև նմուշները: Ծանուցմամբ նշվել է նաև, որ Ընթացակարգի 23-րդ չափաբաժնի համար Ընկերության ներկայացված գնային առաջարկը ակնհայտ ցածր և չհիմնավորված է եղել, ուստի ծանուցմամբ խնդրել են ներկայացնել **գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում՝ ցածր գնի վերաբերյալ:**

7. Որպես չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեսքով հաշվարկ.

կողպեք կախովի

ձեռքբերման գին	1944.09 ՀՀ դրամ
տրանսպորտային ծախսեր	11.32 ՀՀ դրամ
շահույթ	102.92 ՀՀ դրամ
ԱԱՀ	411.67 ՀՀ դրամ
վաճառքի գին	2470 ՀՀ դրամ

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 2016թ. փետրվարի 23-ին ժամը 14:00-ին կայացած նիստի արձանագրության՝

• 1.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի 23-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «**Ավանգարդ» ՍՊԸ-ն չի ներկայացրել ինչպես անհրաժեշտ փաստաթղթերը**, այնպես էլ առաջարկվող ապրանքների նմուշները:

• 2.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 23-րդ չափաբաժնի մասով մերժել, քանի որ երեք աշխատանքային օրվա ընթացքում **չի ներկայացվել համապատասխան փաստաթղթեր**, ըստ հրավերի պահանջի:

4. ԳԲԽ-25/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության 24.03.2016թ. թիվ 40/11-1042 գրությունը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/11-ԲԿՎ(16)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում **ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ, եթե առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ**: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ **ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին: Ընդ որում, գնային առաջարկը համարվում է

չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Ընկերությունը հայտի գնային առաջարկում Ընթացակարգի 14-րդ չափաբաժնով՝ **«օճառ ձեռքի»** գնման առարկայի մեկ միավորի համար նշել է **վաճառքի գինը՝ 690 ՀՀ դրամ**, 17-րդ չափաբաժնով՝ **«օճառ փնփեսական»** գնման առարկայի մեկ միավորի համար նշել է **վաճառքի գինը՝ 410 ՀՀ դրամ**, և 23-րդ չափաբաժնով՝ **«կողպեք կախովի»** գնման առարկայի մեկ միավորի համար նշել է **վաճառքի գինը՝ 2470 ՀՀ դրամ**, ինչը ցածր է եղել տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից:

Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, «Ավանգարդ» ՍՊԸ-ից Ընթացակարգի 14-րդ, 17-րդ և 23-րդ չափաբաժինների մասով պահանջել է ներկայացնել 75%-ից ցածր գնային առաջարկի վերաբերյալ հիմնավորում՝ **գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող:**

Վերը նշված չափաբաժինների մասով որպես ներկայացված չհիմնավորված ցածր գնային առաջարկի հիմնավորում Ընկերության կողմից ներկայացվել է հետևյալ տեսքով հաշվարկ, որը վերնագրվել է որպես «Գնային առաջարկի հիմնավորում».

օճառ ձեռքի

ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում	527.8 ՀՀ դրամ
տրանսպորտային ծախսեր	18,45 ՀՀ դրամ
շահույթ	7.9 ՀՀ դրամ
ԱԱՀ	28.75 ՀՀ դրամ
վաճառքի գին	690 ՀՀ դրամ

օճառ փնփեսական

ձեռքբերման գին ԵՏՄ անդամ երկրում	313.07 ՀՀ դրամ
տրանսպորտային ծախսեր	11,6 ՀՀ դրամ
շահույթ	17 ՀՀ դրամ
ԱԱՀ	68.33 ՀՀ դրամ

վաճառքի գին	410 ՀՀ դրամ
-------------	-------------

կողպեք կախովի

ծեռքբերման գին	1944.09 ՀՀ դրամ
տրանսպորտային ծախսեր	11.32 ՀՀ դրամ
շահույթ	102.92 ՀՀ դրամ
ԱԱՀ	411.67 ՀՀ դրամ
վաճառքի գին	2470 ՀՀ դրամ

Գնային առաջարկի հիմնավորման մեջ նշվել է, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ն պարտրաստ է ձեռքի օճառը մատակարարել 1 կգ 690 ՀՀ դրամ գնով, տնտեսական օճառը՝ 1 կգ 410 ՀՀ դրամ գնով:

Պատվիրատուն, առաջնորդվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով, ոչ բավարար է համարել հիմնավորումը, քանի որ «Ավանգարդ» ՍՊԸ-ից Ընթացակարգի 14-րդ, 17-րդ և 23-րդ չափաբաժինների մասով պահանջվել է ներկայացնել 75%-ից ցածր գնային առաջարկի **գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող** հիմնավորումներ, մինչդեռ, ըստ Պատվիրատուի, Ընկերության կողմից չի ներկայացվել **գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում**, այլ Ընկերությունը ներկայացրել է ընդամենը վկայակոչված հաշվարկը:

Ինչ վերաբերում է «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. բողոքով ներկայացրած այն պնդմանը, որ Ընկերությունը հրավերում նշված էլեկտրոնային փոստին սահմանված ժամկետում ուղարկել է պահանջվող փաստաթղթերը և անհիմն է «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը «հրավերի պահանջներին չհամապատասխանող» հայտերի ցուցակում ընդգրկելը՝ «չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր, ըստ հրավերի պահանջի» հիմնավորմամբ, քանի որ հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը Ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են, ապա այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ «Ավանգարդ» ՍՊԸ-ի հայտը Ընթացակարգի 14-րդ, 17-րդ և 23-րդ չափաբաժինների մասով մերժվել է ոչ թե որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված **փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու**

հիմքով, այլ «Ավանգարդ» ՍՊԸ-ի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը (գնային առաջարկի գրավոր, պատճառաբանված և հնարավորինս փաստաթղթերով ապացուցվող հիմնավորում) չներկայացնելու հիմքով:

Նկատի ունենալով, որ Ընթացակարգի 14-րդ, 17-րդ և 23-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի 2016թ. փետրվարի 16-ին ժամը 12:00-ին կայացած նիստի արձանագրության 2.1 կետով և 2016թ. փետրվարի 23-ին ժամը 14:00-ին կայացված նիստի արձանագրության 2.2 կետով որոշումը համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի առաջարկում ենք «Ավանգարդ» ՍՊԸ-ի 15.03.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այոնց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
սահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-25/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ռ. Մկրտչյան